ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1387 22.11.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ
գեներալ-լեյտենանտ
պարոն. Վ.Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի նոյեմբերի 17-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Վաղարշապատի ՁՊՎ արձանագրել էր մի շարք խախտումներ և թերություններ: Դրանք են.

<< Ոստիկանության ... >>
Մուտք թիվ 7943
«25» 11 2013թ.

Թերություններ.

1. Խոհանոցի վարթակը գտնվում էր բաց վիճակում
2. Ինչպես ամբողջ ՁՊՎ-ն, այնպես էլ բուժսենյակը գտնվում էին ամբողջությամբ փոշոտ վիճակում
3. Բուժսենյակի ինչպես բնական , այնպես էլ արհեստական լուսավորությունը վատ էր
4. Խցերում առկա սպտակեղենը օգտագործված էր
5. Գրանցամատյանները լրացվում են թերություններով և ջնջումներով:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ...
ՄՏԻՄ № 4977
«25» 11 2013 թ.

Խախտումներ.

1. Ինչպես նախորդ անգամ, այնպես էլ այս այցելության ժամանակ արձանագրվեց , որ ՁՊՎ անձ է ընդունվում առանց անձը հաստատող փաստաթղթի, որն էլ լուրջ խդիրներ է առաջացրել, իսկ նրա անձը պարզվել է կալանավորումից հետո:
2. Հովհաննես Պապյանը 09.08.2013թ. ժամը 14⁰⁰-16⁰⁰-ին հանդիպել է փատաբանի հետ, ով մուտք է գործել ՁՊՎ-ի տարածք, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում ոչ մի գրառում չկար:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

3. Արամ Մուշեղյանը կրկի 12.09.2013թ. ժամը 14^{00}-14^{05}-ը 02.09.2013թ.–ին ժամը 14^{30}-15^{00}-ին և 26.08.2013թ ժամը 14^{15}-14^{35}-ը <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի հանդիպել է իր փաստաբանի հետ, երեք դեպքում էլ բացակայում էր համապատասխան դիմումները ՁՊՎ մուտք գործելու:
4. Հայկ Միսակյանը ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի 08.10.2013թ. ժամը 17^{30}-17^{40}-ը հանդիպել է իր փաստաբանի հետ, բայց փաստաբանի ՁՊՎ մուտք գործելու համապատասխան դիմումը բացակայում էր:
5. Արայիկ Ալբերտի Միքայելյանը ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել 28.06.2013թ, ժամը 13^{00}-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի Ա. Միքայելյանը կալանավորվել է 01.07.2013թ. ժամի 12^{00}-ին, բայց ըստ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանի Ա. Միքայելյանը խցից դուրս է բերվել և դատարան է տեղափոխվել ժամը 13^{00}-13^{20}-ը ընկած ժամանակահատվածում, արդյունքում՝ խախտվել է Ա.Միքայելյանի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքը, և նրան արգելանքի վերցնելու ժամը արդեն իսկ լրացած են խցից դուրս բերել և տեղափոխել դատարան, այնինչ ժամը 13^{00}-ին նա պետք է արդեն իսկ ազատ արձակված լիներ:
Ավելացնենք նաև, որ նշված իրավախախտումը ՁՊՎ–ում կատարվել էր նաև նախորդ այցելության ընթացքում:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված իրավախախտումները և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Միաժամանակ հայտնում ենք, որ Արմավիրի մարզի Արմավիրի և Վաղարշապատի ՁՊՎ-ները աշխատում են գերծանրաբեռնված և ինչպես նախորդ տարիների ընթացքում, այս տարի ևս հերթապահությունը իրականացվում է օրեկան մեկ հերթապահ ոստիկանի կողմից: Նշենք, որ 01.01.2013թ-ից մինչ 17.11.2013թ-ը Վաղարշապատի ՁՊՎ-ում պահվել է 378 անձիք, իսկ Արմավիրի ՁՊՎ-ում պահվել է 393 անձիք, ընդհանուր առմամբ՝ 771 անձիք: Այդ իսկ պատճառով Դիտորդական խումբը առաջարկում է, որպեսզի Արմավիրի մարզի գործող երկու ՁՊՎ-ներում համալրվի օրվա հերթապահ ոստիկանի հաստիքները, դարձնելով օրեկան երկու հոգի՝ աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Դիտորդական խմբի կողմից կատարված առաջարկությունը կամայական մեկնաբանություն չունի, այլ իրատեսորեն հնարավոր չէ օրեկան հերթապահություն իրականացնող մեկ ոստիկանի կողմից աշխատանքները կատարել ըստ պատշաճի:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

N- 2/2-1-3626 «20» 12 2013թ.

Ձեր՝ 22.11.2013թ. թիվ 2621/1387 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ նոյեմբերի 17-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում և քննչական գլխավոր վարչությունում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն: Արձանագրված բոլոր թերությունները վերացվել են:

1.Սույն թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 19:30-ին ձերբակալվել և ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ է ներկայացվել կասկածյալ, մշտական բնակության վայր չունեցող Միշա Վալերիի Օգանովը և քանի որ վերջինս երբևէ ՀՀ քաղաքացու անձնագիր չի ունեցել, այդ իսկ պատճառով նրան հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Պողոսյանը, <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի>> ներքին կանոնակարգի թիվ 11-րդ կետի պահանջներին համապատասխան, ձերբակալվածին ուղղված հարցերի միջոցով ճշտել է ձերբակալման արձանագրության մեջ նշված անձնական տվյալները, կազմել Միշա Վալերիի Օգանովի տվյալներով անձը հաստատող լուսանկարով տեղեկանք և կցել ձերբակալվածի անձնական գործին:

16.10.2013թ քննիչի միջնորդությամբ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը Միշա Վալերիի Օգանովի նկատմամբ որոշում է կայացրել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Այնուհետև նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի միջոցով պարզվել է, որ կալանավորվածը հանդիսանում է 28.04.1988թ. Տաշիր քաղաքում ծնված Մեխակ Վալերիի Օհանովը և անճշտությունը ուղղելու համար քննիչի կողմից 17.10.2013թ. կրկնակի միջնորդություն է ներկայացվել Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որտեղ որոշում է կայացվել՝ կալանավորումը

գանովի փոխարեն նշել Մեխակ Վալերիի Օհանով: Որոշումը ստանալուց հետո Վ.Պողոսյանը <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանի>> 333 հերթական համարի տակ Օգանով Միշա Վալերիի գրանցման սյունակում ավելացրել է <<Օհանով Մեխակ Վալերիի>> բառերը: 18.10.2013թ. Մ. Օհանովը տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ:

2. Քննիչ Է.Բաբերյանը և դատապաշտպան Պ.Բոյաջյանը 09.08.2013թ. ժամը 16:00-ին ՁՊՎ-ում տեսակցել են ձերբակալված Հ.Պապյանի հետ, սակայն ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանի անփութության հետևանքով խախտվել է ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի>> ներքին կանոնակարգի թիվ 176 կետի պահանջները և <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրառումը կատարվել է թերի՝ մատյանում նշելով միայն քննիչի այցելության մասին:

3-4. Հայկ Միսակյանի և Արամ Մուղալյանի փաստաբանների հետ տեսակցություններն տրվել են վերջիններիս կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերի հիման վրա, ինչը կարգավորվում է <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 15 հոդվածով և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի>> ներքին կանոնակարգի թիվ 53 և 54 կետերով, որոնց համաձայն ՁՊՎ մուտք գործելու և իրենց պաշտպանյալներին տեսակցելու համար փաստաբանների կողմից որևէ դիմում ներկայացնել չի պահանջվում: Նշված տեսակցությունների վերաբերյալ ՁՊՎ ոստիկանների կողմից <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ:

5. Ոստիկանության Վաղարշապատի քննչական բաժանմունքում հարուցված քրեական գործով 28.06.2013թ. ժամը 13:00-ին Արայիկ Միքայելյանը ձերբակալվել և տեղափոխվել է ոստիկանության Վաղարշապատի բաժնի ՁՊՎ: 01.07.2013թ. ժամը 12:00-ին մեղադրյալ Ա.Միքայելյանը ներկայացվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը քննության առնելու նպատակով: Նույն օրը դատարանի կողմից միջնորդությունը բավարարվել է, որից հետո Ա.Միքայելյանը տեղափոխվել է ՁՊՎ: Ա.Միքայելյանի՝ ՀՀ սահմանադրությամբ նախատեսված իրավունքը չի խախտվել, այլ նրա տեղաշարժի մասին ՁՊՎ ոստիկան Մ.Գյոզալյանի անփութության հետևանքով <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում ժամանակին չեն կատարվել համապատասխան գրառումներ, իսկ հետագայում նույն ոստիկանի կողմից կատարվել է սխալ գրառում՝ դուրս բերման ժամը նշելով 13:00-ն, իսկ վերադարձինը՝ 13:20-ը:

Կատարված ծառայողական քննության արդյունքներով գործառութային պարտականությունների կատարման մեջ թերանալու համար ոստիկանության Վաղարշապատի բաժնի հերթապահ մասի պետ Վ.Վարդանյանը և ՁՊՎ ոստիկան Ս.Միքայելյանը խիստ նախազգուշացվել են, իսկ ՁՊՎ ոստիկան Մ.Գյոզալյանը ենթարկվել է կարգապահական տույժի:

Ինչ վերաբերվում է ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի և Վաղարշապատի բաժինների ՁՊՎ-ներում հերթապահ ոստիկանների երկուական հաստիքներ ավելացնելուն, ապա այդ հարցը կքննարկվի ՀՀ ոստիկանությունում:

ՀՀ ոստիկանության շտաբ